ՀՏԴ 339.13.012.434

Հ.Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Վ.Բ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դիտարկվում են բնական մենաշնորհները՝ որպես տնտեսագիտական կատեգորիաներ, հստակեցվում են դրանց էությունը և բովանդակությունը, առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները:

Առանցքային բառեր. բնական մենաշնորհ, տնտեսագիտական կատեգորիա, պետական կարգավորում:

Տնտեսության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է տնտեսավարման նոր, առավել արդյունավետ մեթոդներին անցմամբ՝ հիմնված ինովացիոն տեխնոլոգիաների և շուկայական պահանջներից բխող կառավարչական ռազմավարության վրա: Այդ գործընթացում առանձնահատուկ դեր ունեն բնական մենաշնորհները, որոնց գործունեությունն ուղղակիորեն անդրադառնում է երկրի մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Մասնավորապես, վերջին տարիներին տվյալ ոլորտի սուբյեկտները զարգացած երկրներում ապահովում են համախառն ներքին արդյունքի 10-13 տոկոսը, բնակչության 7 տոկոսի զբաղվածությունը, իսկ հիմնական կապիտալում ներդրումները միայն 2010 թվականի տվյալներով կազմել են 86,8 մլրդ ԱՄՆ դոլար [1]: Իրականացնելով ենթակառուցվածքային գործառույթ, բնական մենաշնորները ռազմավարական դեր ունեն ազգային տնտեսության կայունության և բնականոն կենագործունեության ապահովման հարցում: Նրանց թողարկած և արտաքին ու ներքին շուկաներում իրացվող արտադրանքը և ռեսուրսները բավարարում են բնակչության զգալի մասի պահանջմունքները և կարևոր նախապայման հանդիսանում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար: Խիստ էական է նաև բնական մենաշնորհի ոլորտում գործող սուբյեկտների մասնակցությունը բյուջետային եկամուտների ձևավորման գործում: Միևնույն ժամանակ, գոյություն ունի հիմնախնդիրների մի ամբողջական համախումբ՝ կապված մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունների գործունեության մակրոտնտեսական և միկրոտնտեսական արդյունավետության հետ:

Բնական մենաշնորհները, որպես տնտեսագիտական կատեգորիա, գրեթե միշտ գտնվել են մասնագետների և հետազոտողների ուշադրության կենտրոնում, ինչի մասին վկայում են այդ ուղղությամբ տեսական բազմաթիվ ուսումնասիրությունները: Տնտեսագիտության տարբեր ուղղություններին և դպրոցներին հարող մասնագետ-

ները տարբեր կերպ են մեկնաբանում "բնական մենաշնորհ" հասկացության էությունը և բովանդակությունը: Մասնավորապես, նեոդասականների կողմից տրվող սահմանումները հիմնված են արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունների վրա, որոնք պայմանավորված են մասշտաբի էֆեկտով և իրենց արտացոլումն են ստանում երկարաժամկետ հատվածում ծախսերի կրճատման մեջ: Միաժամանակ, շատ հետազոտողներ որպես բնական մենաշնորհների հիմնական բնութագրիչ առանձնացնում են մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունների թողարկած արտադրանքի նկատմամբ պահանջարկի ոչ էլաստիկության վրա:

Հարկ է նշել, որ բնական մենաշնորհները, որպես տնտեսագիտական կատեգորիա, ներկայացնում են տեսական հետազոտությունների առանձնահատուկ օբյեկտ: Վերջինիս բազմաբովանդակությունը պահանջում է "բնական մենաշնորհ" կատեգորիայի էության և բովանդակության հստակեցում, դրա առանձնահատկությունների և զարգացման օրինաչափությունների բացահայտում, ոլորտի պետական կարգավորման մեթոդների բազմակողմանի հետազոտում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիների հստակեցում, գնագոյացման արդյունավետ մոտեցումների մշակում՝ հիմնված գործող ընկերությունների և վերջնական պառողների շահերի հաշվեկշռման վրա:

Տարբեր տնտեսագետների և հետազատողների կողմից հատկապես կարևորվում է այն փաստը, որ մենաշնորհների գոյությունը տնտեսապես հիմնավորված և արդարացված է միայն այն դեպքում, երբ արտադրության ծավալների ավելացումը հնարավորություն է տալիս ապահովել ծախսերի խնայողություն: Միաժամանակ, չկարգավորվող մենաշնորհները, օգտագործելով իրենց շուկայական դիրքերը, առավելագույն շահույթ ստանալու հակվածություն են ցուցաբերում՝ այդ նպատակով օգտագործելով շուկայում իրենց գերիշխող դիրքը: Հետևաբար, բնական մենաշնորհների պետական կարգավորումն ունի չափազանց կարևոր նշանակություն, որը պահանջում է, նախ և առաջ, գործող ընկերությունների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ խիստ վերահսկողության իրականացում:

Անշուշտ, բնական մենաշնորհների կենսագործունեության արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, ինստիտուցիոնալ միջավայրի կառավարման անհրաժեշտությունը, պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական գերակայությունները, ինովացիոն գործընթացների խորացումը և մի շարք այլ հանգամանքներ տվյալ ոլորտի գործունեության և պետական կարգավորման արդյունավետ մեխանիզմների մշակման անհրաժեշտություն են առաջադրում:

Ընդհանուր առմամբ, ժամանակակից տնտեսությունում բնական մենաշնորհներն ունեն ռազմավարական նշանակություն, և դրանց արդյունավետ կենսագործունեությամբ է պայմանավորված ինչպես տնտեսական համակարգի զարգացումը, այնպես էլ հասարակական պահանջմունքների բավարարումը: Այս տեսանկյունից՝

տնտեսական զարգացման ներկա փուլում բնական մենաշնորհներն իրականացնում են մի շարք գործառույթներ: Առաջինը կապված է համապատասխան ենթակառուցվածքների գործունեության ապահովման հետ, որոնք հիմնականում վերաբերում են ցանցային համակարգերին: Վերջիններիս դերը չափազանց մեծ է տնտեսության տարբեր ճյուղերի գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման գործում: Հաջորդ գործառույթը կապված է սոցիալական նշանակության խնդիրների լուծման հետ: Գաղտնիք չէ, որ բնական մենաշնորհի ոլորտում թողարկվող ապրանքները և ծառայություններն ունեն կենսական նշանակություն և կարևոր տեղ են զբաղեցնում արտադրական և ոչ արտադրական սպառման կառուցվածքում: Հետևաբար, տվյալ ոլորտի ընկերությունների ֆինանսատնտեսական կայունությունը կարևոր նախապայման է բնակչության և տնտեսության կենսագործունեության ապահովման հարցում: Միաժամանակ, տնտեսական զարգացման ներկա փուլում բնական մենաշնորհի ոլորտների առևտրայնացման արդյունքում սոցիալական գործառույթի մասշտաբները զգալիորեն կրճատվել են, ինչը պահանջում է պետության կողմից սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված մոտեցումների կիրառում: Բացի նշվածներից, բնական մենաշնորհներն իրականացնում են նաև կայունացման գործառույթ: Տվյալ ոլորտում թողարկվող արտադրանքը և մատուցվող ծառայությունները ազգային տնտեսության կենսագործունեության կարևոր երաշխիքներն են: Բնակչության և տնտեսության տարբեր սեկտորների՝ կողմից դրանց նկատմամբ գոյություն ունեցող կայուն պահանջարկը հնարավորություն է տալիս բնական մենաշնորհի ոլորտի ընկերություններին իրենց գործունեությամբ նպաստել տնտեսության կայուն զարգացմանը և զսպել ճգնաժամային դրսևորումները: Չափազանց էական է նաև բնական մենաշնորհների դերը բյուջետային եկամուտների ձևավորման գործում: Որպես կանոն, տվյալ ոլորտում գործող ընկերությունները, պայմանավորված գործունեության լայն շրջանակներով և շրջանառության մեծ ծավալներով, հանդիսանում են խոշոր հարկատուներ: Հետևաբար, նրանց գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը ոչ միայն նպաստում է տնտեսության տարբեր ճյուղերի կենսագործունեության ապահովմանը, այլև ապահովում է բյուջետային զգալի մուտքեր:

Բնական մենաշնորհի ոլորտում գործող ընկերությունների կողմից թողարկվող արտադրանքն օգտագործվում է գրեթե բոլոր ապրանքների և ծառայությունների արտադրության գործընթացում, և դրանց ձեռքբերման նպատակով կատարվող ծախսերը զգալի տեղ են զբաղեցնում ինքնարժեքի մեջ: Այս տեսանկյունից՝ տվյալ ոլորտն ունի յուրահատուկ դեր արտադրական ծախսերի ավելացման գործում: Հետևաբար, գնագոյացման արդարացի մեխանիզմների ներդրումը և սակագնային կարգավորման արդյունավետ մոտեցումների կիրառումը նպաստում են ոչ միայն

հասարակության սոցիալական խնդիրների արդյունավետ լուծմանը, այլ նաև տնտեսության տարբեր ճյուղերում արտադրվող ապրանքների և ծառայությունների գների աճի զսպմանը և դրանց մրցունակության բարձրացմանը:

Ըստ էության, բնական մենաշնորհները պետականորեն կարգավորելու առումով հատկապես կարևոր նշանակություն ունի գնագոյացման տնտեսապես հիմնավորված և սոցիալական տեսանկյունից արդարացված մեխանիզմի ներդրումը: Խնդիրն այն է, որ այս դեպքում զուտ շուկայական մեխանիզմների գործունեությունը հասարակության և պետության շահերի տեսանկյունից չի կարող լինել արդարացված, քանի որ, ինչպես ցանկացած մենաշնորհային ընկեություն, բնական մենաշնոհի ոլորտում գործող սուբյեկտները ևս հակված են սեփական մենաշնորհային դիրքն օգտագործելու առավելագույն շահույթի ստացման նպատակով: Միաժամանակ, գոյություն ունի նաև խնդրի մյուս կողմը, ինչը պայմանավորված է տվյալ ոլորտում գործող սուբյեկտների համար ընդլայնված վերարտադրության ապահովման և ողջամիտ շահույթի ստացման հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությամբ: Հետևաբար, բնական մենաշնորհների պետական կարգավորման համակարգը պետք է ապահովի սոցիալական տեսանկյունից ընդունելի սակագների սահմանման միջոցով ոլորտի ներդրումների կայուն զարգացման հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Центр развития – ежемесячное обозрение российской экономики, 2010. www.dcenter.ru/pdf.

А.Э. БАГДАСАРЯН, В.Б. БОСТАНДЖЯН

ОСНОВНЫЕ ФУНКЦИИ ЕСТЕСТВЕННЫХ МОНОПОЛИЙ И МЕХАНИЗМЫ ИХ РЕАЛИЗАЦИИ

Рассматриваются естественные монополии как экономическая категория, уточняются сущность и содержание, особенности и закономерность развития.

Ключевые слова: естественная монополия, экономическая категория, государственное регулирование.

H.E. BAGHDASARYAN, V.B. BOSTANJYAN

THE MAIN FUNCTIONS OF NATURAL MONOPOLIES AND MECHANISMS OF THEIR IMPLEMENTATION

Natural monopolies are considered as an economic category, as well as their essence, content, peculiarities and development patterns are specified.

Keywords: natural monopoly, economic category, government regulation.